ԷՋԵՐ ԱԼ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

(Ծննդյան 80-ամյակի առիթով)

Հ. Հ. ՖԵԼՆԵՔՅԱՆ

Ռևոլյուցիոն պայքարի փառավոր ուղի է անցել կոմունիստական պարտիայի և սովետական պետության ականավոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը (Ալ. Մարտունի)։ Նա Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի աննկուն զինվորն էր, Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտն ու զինակիցը։

Մյասնիկյանը, իբրև պարտիական ու ռազմական խոշոր գործիչ, առանձնապես հայտնի դարձավ Բելոռուսիայում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար մղված հերոսական պայքարը ղեկավարելիս։ Նա եղել է Բելոռուսիայի կոմպարտիայի Կենտկոմի բյուրոյի առաջին նախագահը, Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի կազմակերպիչներից ու առաջին ղեկավարներից մեկը։

Սկսած 1919 թ. գարնանից՝ շուրջ երկու տարի Ալ. Մյասնիկյանն աշխատել է մեր հայրենիքի մայրաքաղաքում և, իբրև պարտիական ու ռազմական աշքի ընկնող գործիչ՝ մեծ ավանդ է ներդրել սոցիալիստական շինարարության

կազմակերպման, օտարերկրյա ինտերվենտների և ներքին կոնտրռևոլյուցիայի ջախջախման գործում։ Ռևոլյուցիոն պայքարի լարված ու հերոսական շրջանում նա գլխավորել է ՌԿ(բ)Պ Մոսկվայի քաղաքային կոմիտեն։

Խոշոր են Ալ. Մյասնիկյանի ծառայությունները նաև որպես ռազմական գործչի։ Տարբեր ժամանակներում նա եղել է Արևմտյան, Արևելյան ռազմաճակատների գլխավոր հրամանատար, սովետական բոլոր զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնակատար։ Մյասնիկյանը ակնառու դեր է կատարել Կարմիր բանակի կազմակերպման գործում։

1921 թ. մայիսին Ալ. Մյասնիկյանը պարտիայի Կենտկոմի կողմից աշխատանքի է ուղարկվում Սովետական Հայաստան։ Իբրև Ժողկոմսովետի նախագահ և ռազմական ժողկոմ՝ նա հսկայական աշխատանք է կատարում երկրի ծայրահեղորեն քայքայված տնտեսությունը վերականգնելու, դաշնակների զանգեզուրյան կոնտրռևոլյուցիան լիկվիդացնելու, սոցիալիստական շինարարությունը կազմակերպելու համար։

Անգնահատելի են Ալ. Մյասնիկյանի ծառայությունները Անդրֆեդերացիայի ստեղծման և ամրապնդման գործում։ Նա ՌԿ(բ)Պ Անդրերկրկոմի քարտուղարն էր, Անդրֆեդերացիայի Ժողկոմսովետի ղեկավարներից մեկը։

Ինչպես Բելոռուսիայում և Մոսկվայում, այնպես էլ Հայաստանում ու Անդրկովկասում աշխատելու տարիներին Մյասնիկյանը անդուլ եռանդ գործադրեց մամուլի կազմակերպմանն ու ղեկավարությանը՝ միաժամանակ հանդես գալով իբրև խոշորագույն հրապարակախոս, լենինյան տիպի ականավոր ժուռնալիստ։

Այս հոդվածը նվիրված է Ալ. Մյասնիկյանի բազմակողմանի ռևոլյուցիոն գործունեության կարևոր բնագավառներից մեկի՝ հրապարակախոսության ամենաբեղուն շրջանին (1917—1925 թթ.)։ Մեր նպատակն է եղել տալ Մյասնիկյանի՝ որպես կոմունիստական մամուլի կազմակերպչի ընդհանուր բնութագիրը և ընդգծել նրա հրապարակախոսության մի քանի հատկանիշները։

* * *

1917—1925 թթ., իր ռազմական, պարտիական և պետական գործունեության այդ լարված ու բեղմնավոր տարիներին, Ալ. Մյասնիկյանը սկզբում ուշադրություն է նվիրել կոմունիստական մամուլի ստեղծմանն ու զարգացմանը։ Թե՛ ժամանակավոր կառավարության դեմ բանվորական ու զինվորական մասսաների զժգոհությունը ակտիվ ռևոլյուցիոն հունի մեջ դնելու գործում, թե՛ մեծ Հոկտեմբերի նախապատրաստման ու իրականացման շրջանում և թե՛ սովետական շինարարության հերթական խնդիրները լուծելիս Ալ. Մյասնիկյանը կարևոր, սկզբունքային նշանակություն էր տալիս բոլշևիկյան-սովետական մամուլին, ըստ արժանվույն գնահատելով նրա ագիտացիոն-պրոպագանդիստական և կազմակերպչական վիթխարի ուժը։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից հետո Ալ. Մյասնիկյանը, զինվորական ծառայության մեջ գտնվելով Արևմտյան ռազմաճակատում, ագիտացիոն-կազմակերպչական լայն գործունեություն է ծավալում զինվորների մեջ՝ համախմբելով նրանց բոլշևիկյան կազմակերպությունների շուրջը։ Նրա զրույցներն ու ելույթները զորամասերում, բանվորների ու զինվորների համար կարդացած հրապարակային դասախոսությունները տոգորված

էին ռևոլյուցիոն հաստատակամությամբ, համոզի, մեծ ուժով։ Ամբողջովին եռանդով համակված՝ նա դրսևորում էր բոլշևիկ-ռետորի իր տաղանդը, որ վարակիչ էր ու ազդեցիկ. ռևոլյուցիոն զրոհի նախապատրաստման բուռն, անհանդիստ մթնոլորտում արդեն ծնվում էր մոտ ապագայի «կարմիր գեներալը» (Ս. Օրջոնիկիձե)։ Մյասնիկյանը խորապես զգում էր, թե ինչպիսի անփոխարինելի դեր ունի կատարելու այդ պայքարում բոլշևիկյան տպագիր խոսքը։ Եվ նա, Մ. Ֆրունզեի անմիջական մասնակցությամբ, ստեղծում է ՌՍԴ(բ)Պ Մինսկի կոմիտեի օրգան «Զվեզդա» թերթը, որը հրատարակվեց մոտ մեկ ամիս՝ 1917 թ. հուլիսի 27-ից մինչև օգոստոսի 23-ը։

«Զվեզդա»-ում Ալ. Մյասնիկյանը հանդես էր գալիս ժամանակավոր կառավարության կոնտրռևոլյուցիոն էությունը մերկացնող, բոլշևիկյան պարտիայի տակտիկան պարզաբանող հոդվածներով ու առաջնորդողներով։ Նա առանձնապես կարևոր էր համարում բոլշևիկների հասցեին «հրապարակային աճուրդով վաճառված» բուրժուական մամուլի տարածած հերյուրանքների մերկացումն ու բննադատությունը[1]։ «Զվեզդա»-ն խոշոր դեր խաղաց Արևմտյան երկրամասի բանվորների ու զինվորների բոլշևիկացման, նրանց ռևոլյուցիոն մոբիլիզացման գործում, մասսաներին նախապատրաստելով զինված ապստամբության։ 1919 թ. ամռանը, Մինսկի բոլշևիկյան կազմակերպության հիմնադրման երկրորդ տարելիցի առթիվ գրած իր հոդվածում Մյասնիկյանը նշում էր Բելոռուսիայի բոլշևիկյան մամուլի բացառիկ դերը «ռևոլյուցիոն ճշմարտությունը մասսաներին սովորեցնելու» գործում։ Բոլշևիկների ծավալած «կրակոտ քարոզի» շնորհիվ, գրում էր նա, «փորձ ձեռք բերած մասսաները հեշտությամբ ընկալեցին մեր գաղափարները և գրավվեցին մեր թերթերի բոցաշունչ հոդվածներով ու դիպուկ թղթակցություններով։ «Զվեզդա»-ի դերը այս տեսակետից վիթխարի է»։ Մյասնիկյանը հայտնում էր, որ մի անգամ «Իզվեստիա» թերթի խմբագրությունում իրեն «արել են հետևյալ կոմպլիմենտը». «Մենք միշտ էլ բավականությամբ և մեծ հետաքրքրությամբ էինք կարդում «Զվեզդա»-ն, որովհետև այն մեր ամենալուրջ տպագիր օրգաններից մեկն է»[2]։

Ալ. Մյասնիկյանը զգալի ջանք գործադրեց «Մոլոտ» թերթի հրատարակման համար, որը սկսեց լույս տեսնել 1917 թ. սեպտեմբերի 15-ից և փոխարինում էր ժամանակավոր կառավարության կողմից փակված «Զվեզդա»-ին։ Շուտով արգելվեց նաև այս լրագիրը։ Հոկտեմբերի 8-ին հրապարակ իջավ բոլշևիկների նոր օրգանը՝ «Բուրեվեստնիկ»-ը։

Ի՞նչն էր բնորոշը Մյասնիկյանի հրապարակախոսության համար այս շրջանում, ո՞րն էր նրա ելույթների առանցքը, հիմնական ուղղվածությունը։ Դա պրոլետարական ռևոլյուցիայի անհրաժեշտության և անխուսափելիության գաղափարի համակողմանի քարոզն էր, զինված ապստամբության նախապատրաստումը թե՛ տեսականորեն և թե՛ գործնական առումով։ Թե՛ «Զվեզդա», «Մոլոտ», «Բուրեվեստնիկ» թերթերում տպագրված Մյասնիկյանի հոդվածները, թե՛ հրապարակային ելույթներն ու զեկուցումները ուղղված էին այդ հիմնական նպատակին։ Նրա բանավոր ու գրավոր խոսքի մեջ կարմիր թելի պես անցնում էր երկու հիմնական գիծ. մի կողմից՝ բոլշևիկյան պարտիայի տակտիկայի մասսայականացումն ու պաշտպանությունը Ապրիլյան կոնֆե-

1 Տե՛ս Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, Երևան, 1957. էջ 138։
2 Նույն տեղում, էջ 254։

ռանսի և VI համագումարի ընդունած որոշումների ոգով. մյուս կողմից՝ մենշևիկների և էսեռների վարքագծի սկզբունքային քննադատությունը ժամանակավոր կառավարության կոնտրռևոլյուցիոն ներքին ու արտաքին քաղաքականության մերկացման ընդհանուր ֆոնի վրա։

Թե ինչպիսի կարևոր նշանակություն էր տալիս Ալ. Մյասնիկյանը այդ պայքարում բոլշևիկյան մամուլին, պարզ կերպով երևում է նաև Բաքվում հրատարակվող «Սոցիալ-դեմոկրատ» հայերեն թերթի խմբագրությանը ուղարկած նրա նամակից, որը լույս տեսավ 1917 թ. օգոստոսի 16-ին։ Բոլշևիզմի վրա ռեակցիայի և նրա աջակից ու կամակատար բուրժուական պարտիաների բուռն հարձակման պայմաններում, նշում էր Մյասնիկյանը, «Սոցիալ-դեմոկրատ»-ի հրատարակությունը հայ կյանքում շատ ուրախալի և քաղաքական հույժ կարևոր մի գործ է։ Նա վճռական դեր էր վերագրում բոլշևիկյան հայ մամուլին հայ բանվորներին «բառի հարազատ իմաստով սոցիալիստորեն դաստիարակելու» և օպորտունիստների ու սոցիալ-պատրիոտների կորստաբեր թույնից նրանց զերծ պահելու գործում։ «Հեղափոխությունը իր երկրորդ ու վճռական շրջանն է անցնում,— գրում է Մյասնիկյանը, ելնելով բոլշևիկյան պարտիայի հենց նոր ավարտված VI համագումարի պատմական որոշումներից։ — Պետք է, որ բանվորությունն այժմ ավելի քան զգաստ, կազմակերպ ու զգույշ լինի։ Մեր գրական օրգանների դերը այստեղ շատ մեծ է, մասնավորապես «Սոցիալ-դեմոկրատ»-ի վրա խոշոր պարտք կա։ Ցանկանում եմ նրան անդուլ աշխատանք և երկար կյանք, որ ռեակցիան նրան բռնի չխեղդի, իսկ հաջողությունը ապահովված է»։ Մյասնիկյանը նույնպիսի ցանկություն էր մաղթում նաև Թիֆլիսում լույս տեսնող «Բանվորի կոիվը» թերթին[3]։ «Սոցիալ-դեմոկրատ»-ի նույն համարում տպագրվեց Մյասնիկյանի՝ Պետրոգրադից ուղարկած «Պրոլետարիատն ու բուրժուազիան արդի հեղափոխության մեջ» հոդվածը, որտեղ հակիրճ, բայց դիպուկ բնորոշված է երկրում ստեղծված քաղաքական վիճակը, բնութագրված են ռևոլյուցիայի շարժիչ ուժերը։

Ալ. Մյասնիկյանի հրապարակախոսությանը անդրադառնալիս, բնականաբար, չպետք է մոռացության տալ հետևյալ նկատառումը. ինչքան բազմակողմանի էր Մյասնիկյանի ռևոլյուցիոն աշխատանքը ռազմական, պարտիական ու պետական ասպարեզներում, նույնքան էլ բազմազան էր նրա հրապարակախոսությունը՝ այդ ասպարեզներից յուրաքանչյուրի համար բնորոշ դրրսևորումներով. Մյասնիկյանի ժուռնալիստական եռանդուն աշխատանքը սերտորեն միահյուսված էր նրա ընդհանուր ռևոլյուցիոն գործունեությանը, ավելի ճիշտ՝ բխում էր այդ գործունեությունից։ Եվ դրան զուգընթաց ու պատմական կոնկրետ իրադրության համապատասխան՝ ամեն անգամ մի նոր կողմից էր դրսևորվում նրա հրապարակախոսական մեծ կարողությունը։

Նոր բովանդակություն և ներքին նոր սլացք ստացավ Ալ. Մյասնիկյանի հրապարակախոսությունը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո, քաղաքացիական կռիվների և սովետական շինարարության առաջին տարիներին։ Այստեղ հարկավոր է տարբերել երկու հիմնական շրջան. Բելոռուսիայում, Արևմտյան ռազմաճակատում ու Մոսկվայում կատարած աշխատանքը (1917 թ. նոյեմբեր —1921 թ. ապրիլ) և պետա-

3 «Սոցիալ-դեմոկրատ», Բաքու, 1917, № 15։

կան-պարտիական գործունեությունը Հայաստանում ու Անդրկովկասում (1921 թ. մայիս —1925 թ. մարտ)։

Առաջին շրջանում Մյասնիկյանի գրած հոդվածները, նրա ելույթներն ու զեկուցումները կարելի է խմբավորել հետևյալ հիմնական հարցերի շուրջը. ա) սոցիալիստական հայրենիքի պաշտպանություն գերմանական իմպերիալիզմից, ներքին կոնտրռևոլյուցիայից և օտարերկրյա ինտերվենտներից, Կարմիր բանակի ստեղծում և ամրապնդում. բ) պարտիական աշխատանքի կազմակերպում, պայքար հակապարտիական խմբավորումների դեմ. գ) սոցիալիստական շինարարություն, նոր կյանքի, նոր պետականության սկզբունքների արմատավորում։

«Պրավդա»-ում լույս տեսած «Պարտիան և Կարմիր բանակը», «Ռազմական-պարտիական աշխատանքի կազմակերպումը», «Իզվեստիա»-ում հրատարակված «Օրվա խնդիրը», «Վլադիկավկազի մագիստրալում (ռազմական ակնարկ») և այլ հոդվածներում, որոնց մեծ մասը գործնական-կոնկրետ հարցեր շոշափելով հանդերձ՝ գրված է հրապարակախոսական վարակիչ շնչով ու կրքոտությամբ, Մյասնիկյանը կոչ էր անում բարձրացնել բանակում գիտակցական կարգապահությունը, զորամասերում ուժեղացնել պարտիական աշխատանքը, բոլոր միջոցներով ամրացնել թիկունքը, անողոք լինել թշնամու և դավաճանների հանդեպ... Սոցիալիստական հայրենիքը վտանգի մեջ է. ամեն ինչ ռևոլյուցիայի նվաճումների պաշտպանության համար,— այս էր Մյասնիկյանի հոդվածների ներքին պաթոսը։ Նրա խոսքը հակիրճ է, բայց և դիպուկ ու հատու. նրանում զգացվում է բախտորոշ և հերոսական օրերի լարվածությունը, բուռն, ազատատենչ ոգին. այդ խոսքը ամբողջովին համակված է հաղթանակի խոր հավատով, կամքով ու վճռականությամբ։ Հարավային ռազմաճակատի իրադրությանը նվիրված հոդվածներից մեկում, առաջադրելով անհապաղ կիրառել ռազմաճակատի և թիկունքի ամրապնդմանն ուղղված մի շարք կոնկրետ միջոցառումներ (կոմունիստների ճիշտ տեղաբաշխում, քաղաքական աշխատողների ավելի նպատակահարմար օգտագործում, պայքար դասալքության դեմ և այլն), Մյասնիկյանը գրում էր. «Ժամանակը չի սպասում։ Պետք է շտապել, թե չէ՝ ստիպված կլինենք այդ ժամանակվա համար վճարել տարածությամբ»։ «Կազմակերպում և միմիայն կազմակերպում,— եզրափակում էր նա,— իսկ խոսքերը պետք է երկրորդ պլանը մղվեն։ Եվ այն ժամանակ բանվորա-գյուղացիական երկրի նոր, ավելի լավ գործերը ամենայն պարզությամբ կդրսևորեն կոմունիստական ռևոլյուցիայի կենսունակությունը և ապագան»[4]։ Մի այլ տեղ, անդրադառնալով Կովկասյան ռազմաճակատում Դենիկինի դեմ կարմիր զորամասերի ձեռք բերած դժվարին հաղթանակներին, նա նշում էր, որ վերջին արյունահեղ մարտերը «վկայում են միայն մի բանի մասին՝ հարավային սպիտակ գեներալի արևը որոշակի կերպով մայր է մտնում։ Հեռու չէ այն օրը, երբ Սև ծովի ափերին եռագույն դրոշակը իր տեղը կզիջի ռևոլյուցիայի կարմիր դրոշին»[5]։

Արժեքավոր են Ալ. Մյասնիկյանի հոդվածներն ու ելույթները՝ նվիրված պարտիական և սովետական շինարարության խնդիրներին։ Ղեկավար պարտիական-սովետական աշխատանք կատարելով Բելոռուսիայում, նա հաճա-

4 Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, էջ 252։
5 Նույն տեղում, էջ 262։

խակի հանդես էր դալիս ընդհանրացնելով բոլշևիկյան կազմակերպությունների պայքարի և աշխատանքի հարուստ փորձը, առաջադրելով կենսական խնդիրներ (մասսաների հետ կապի ամրապնդում, պարտիական աշխատանքի նոր մեթոդների ու ձևերի կիրառում և այլն)։ Մի շարք հոդվածներում Մյասնիկյանը անդրադառնում է նաև սոցիալիստական պետականության կազմակերպման, պրոլետարիատի դիկտատուրայի հարցերին, գդալի ուշադրություն նվիրում բուրժուական մամուլի դեմ մղվող պայքարին, նոր հասարակադի կառուցման համար սովետական իշխանության դործադրած ջանքերի լուսաբանությանը։

Պարտիական աշխատանքի կազմակերպման, մարքս-լենինյան ռևոլյուցիոն տեսության պրոպագանդման խնդիրները Մյասնիկյանի ուշադրության կենտրոնում էին նաև այն ժամանակաշրջանում, երբ նա եռանդուն գործունեություն էր ծավալել ՌԿ(բ)Պ Մոսկվայի քաղկոմում՝ նախ որպես զինվորական կազմակերպիչ, իսկ շուտով՝ իբրև քաղկոմի քարտուղար։ Նա պարբերաբար ելույթներ էր ունենում գործարաններում և զինվորների առաջ, «Պրավդա»-ում, «Իզվեստիա»-ում տպագրում էր արդյունաբերության կազմակերպմանը, քայքայված տրանսպորտի վերականգնմանը, շաբաթօրյակներին նվիրված հոդվածներ։ Աշխատավորների շրջանում Մոսկվայի բոլշևիկների կատարած աշխատանքը Մյասնիկյանը հանգամանորեն լուսաբանել է «Անպարտիական կոնֆերենցիա» գրքույկում, որը լույս տեսավ 1919 թ. վականին։ Երկու տարի անց հրատարակվեց նրա «Հանուն պարտիայի (պարտիայի ճգնաժամի շուրջը)» աշխատությունը, որն ուղղված էր տրոցկիստական և մյուս օպոզիցիոն խմբերի դեմ։ Գրքույկը, որը լայնորեն տարածվեց պարտիական մասսաների մեջ, շարադրված է մեր պարտիայի անցած հերոսական ուղու և պատմական փորձի խոր իմացությամբ, մի շարք էջեր գրված են հրապարակախոսական կրքով։

Մոսկվայում աշխատած տարիներին ևս Ալ. Մյասնիկյանը զգալի ջանքեր է գործադրում մամուլի կազմակերպման համար։ Առանձնապես ակտիվ էր նրա մասնակցությունը ՌԿ(բ)Պ Մոսկվայի քաղկոմի և Մոսսովետի օրգանների՝ «Վեչերնիե Իզվեստիա»-ի և «Կոմունիստիչեսկի Տրուդ»-ի հրատարակությանը։ Նա՝ էր խմբագրում իր իսկ նախաձեռնությամբ հիմնադրված «Կոմունիստիչեսկի Տրուդ» ամենօրյա լրագիրը, որը խոշոր դեր խաղաց, մոբիլիզացնելով մայրաքաղաքի բոլշևիկյան կազմակերպություններին և աշխատավորությանը՝ սովի ու տնտեսական քայքայման պայմաններում ռևոլյուցիայի դեմ ծառացած դժվարությունները հաղթահարելու համար մղված պայքարում։ Մյասնիկյանը առանձնակի ուշադրություն էր դարձնում թերթի կազմակերպչական հնարավորությունների լրիվ օգտագործմանը, ինքը ևս գրելով մի շարք հոդվածներ անարխիստների, քաղաքի տնտեսական ու հասարակական կյանքը կազմալուծողների, սպեկուլյանտների և աշխատավորությանը սննդամթերք մատակարարելու գործը խափանողների դեմ։ «Կոմունիստիչեսկի Տրուդ»-ում տպագրվեց նաև Մյասնիկյանի «Վ. Ի. Լենինը որպես թեորետիկ» հոդվածը, ուր համառոտակի բնութագրված է լենինիզմը՝ իր զարգացման հիմնական փուլերում, ընդգծված է առաջնորդի տիտանական աշխատանքը մեր պարտիայի կազմակերպչական, տեսական և տակտիկական հիմունքների մշակման համար։ Երկրորդ անգամ Վ. Ի. Լենինի մասին Ալ. Մյասնիկյանը գրել է 1924 թ. («Իմ հանդիպումները ընկեր Լենինի հետ»)։ Ուշադրավ է այս հուշերի գրության պատմությունը։ Լենինի մահից հետո Մյասնիկյանը մի քանի անգամ հանդես

է եկել աշխատավորության առջև՝ առաջնորդի կյանքին ու գործին, նրա ավանդներին նվիրված զեկուցումներով, պատմել իր հիշողությունները։ Եվ ահա, Թիֆլիսի Ռ. Լյուքսեմբուրգի անվան ծխախոտի գործարանի բանվորները, լսելով նրա պատմածը Լենինի հետ ունեցած հանդիպումների մասին, խնդրում են գրի առնել և տրամադրել իրենց՝ պատի թերթում զետեղելու համար։ Մյասնիկյանը սիրով կատարում է նրանց ցանկությունը. նրա հիշողությունները նախ լույս են տեսնում գործարանի պատի թերթում և ապա «Զարյա Վոստոկա»-ում ու «Մարտակոչ»-ում[6]։ Վերհիշելով իր հանդիպումները պարտիայի և սովետական պետության ղեկավարի հետ, Մյասնիկյանը վառ ու կենդանի օրինակներով ընդգծում էր լենինյան հմայքի մի քանի բնորոշ կողմերը, նրա հաստատակամությունն ու վճռականությունը, հոգատարությունը աշխատավորության կարիքների հանդեպ, անսահման համեստությունը։ Մի շարք դրվագներում Մյասնիկյանը բնութագրում է Լենինին որպես մեծ հռետորի, ցույց է տալիս նրա խոսքի կախարդիչ ուժը։ «Ես անչափ երջանիկ եմ,— վերջացնում է իր հիշողությունները Ալ. Մյասնիկյանը,— և մինչև կյանքիս վերջը կհպարտանամ, որ եղել եմ Վ. Ի. Լենինի ժամանակակիցը, անձամբ ծանոթ եմ եղել, խոսել եմ հետը, սեղմել եմ նրա ձեռքը, մոտ եմ եկել, շրջագայել նրա հետ, եղել եմ այդ հսկայի, մեր ժամանակի հանճարի հետևողն ու փոքր աշակերտը»[7]։

Ալ. Մյասնիկյանի ժուռնալիստական գործունեությունը, կոմունիստական մամուլի ականավոր կազմակերպչի և լենինյան տիպի հրապարակախոսի նրա կարողությունները լայնորեն դրսևորվեցին նաև Հայաստանում ու Անդրկովկասում աշխատելու տարիներին։ «Ամբողջ չորս տարի,— ասել է Ս. Օրջոնիկիձեն,— Ալյոշան մեզ հետ է անդրկովկասյան աշխատանքների ասպարեզում, նախ Հայաստանում և ապա՝ Թիֆլիսում։ Այստեղ Ալյոշան հանդիսանում է մեր կուսակցության հոգին, այստեղ նա ազգային խաղաղության դրոշակակիրն է, այստեղ նա մեր կուսակցության ղեկավարի դիրքումն է։ Նա անդրկովկասյան կոմունիստական համալսարանի կազմակերպողն է, նա—ղեկավարը մեր մամուլի։ Չկա մեր կուսակցության ու խորհրդային աշխատանքի մի անկյուն, որտեղ չլիներ Ալյոշայի ձեռքը»[8]։

Ալ. Մյասնիկյանի ինչպես պարտիական-պետական ամբողջ գործունեությունը, այնպես էլ հրապարակախոսությունն ուղղված էր ՌԿ(բ)Պ Կենտկոմի դիրեկտիվների կենսագործմանը, Վ. Ի. Լենինի հայտնի նամակում («Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին») առաջադրված խնդիրների անշեղ իրականացմանը։ Մյասնիկյանի գրավոր և բանավոր ելույթները այս շրջանում ներթափանցված էին Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրապնդման ու զարգացման, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով։ Նա քննարկում, հրապարակախոսության նյութ էր դարձնում այնպիսի խնդիրներ, որոնք կենսական նշանակություն ունեին Հայաստանի, ամբողջ Անդրկովկասի քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքը նոր հիմունքներով կազմակերպելու և զարգացնելու տեսակետից։ Առանձնապես կարևոր դեր խաղացին Ալ. Մյասնիկյանի ելույթները Անդրֆեդերացիայի կազմավորումը նախա-

6 Տե՛ս Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, էջ 515—516, ծան. 71։
7 Նույն տեղում, էջ 471։
8 «Խորհրդային Հայաստան», 1925, № 69։

պատրաստելու և իրականացնելու շրջանում։ «Խորհրդային Հայաստան», «Զարյա Վոստոկա», «Մարտակոչ» թերթերում տպագրված մի շարք հոդվածներում («Կովկասյան հանրապետությունների ֆեդերացիան», «Կոմունիստական կուսակցությունը և ազգային հարցը Անդրկովկասում», «Մեր միությունը» և այլն) Մյասնիկյանը պարզաբանում էր անդրկովկասյան ժողովուրդների համագործակցության և բարեկամական միասնության անհրաժեշտությունը սոցիալիստական շինարարության գործնական խնդիրների հաջող կենսագործման համար, ցույց էր տալիս քաղաքական, տնտեսական, ռազմական և բարոյական այն գորեղ ուժը, որն ամրարվում էր մեր մեծ հայրենիքի բոլոր ժողովուրդների եղբայրական միասնությամբ։ «Թող իրար կրծոտեն,— գրում էր նա,— թող միմյանց ոչնչացնեն ռուս, ուկրաինացի, հայ և մյուս բուրժուաները և նրանց լակեյները՝ Դաները, Ժորդանիաները, դաշնակները, մուսավաթիսաները և այլն, իսկ սովետական ռեսպուբլիկաների աշխատավորները իրենց եղբայրական Միության միջոցով կհասնեն կոմունիզմին»[9]։

Ալ. Մյասնիկյանի հրապարակախոսության մեջ կարևոր տեղ է բռնում Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, մասնավորապես դաշնակցության մերկացումն ու քննադատությունը։ «Դաշնակցության գոկումենտներից» ժողովածուին կցված առաջաբանում, «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքույկում, մամուլում հրատարակված հոդվածներում Մյասնիկյանը բացահայտում էր դաշնակցական «դիվանագիտության» սնանկությունն ու կորստաբեր ընթացքը, մերկացնում միջազգային իմպերիալիզմի ենթադավությունը «հայոց հարցում», անողոք հակահարված տալիս սովետական իշխանության դեմ դաշնակ պարագլուխների տարածած հերյուրանքներին։ Գնահատելով Մյասնիկյանի խոշոր ծառայությունը գաղափարական պայքարի այդ կարևոր ասպարեզում, ՌԿ(բ)Պ Անդրկովկասյան երկրային կոմիտեն նշել է. «Լենինյան դպրոցի լավագույն աշակերտներից մեկը լինելով, ազգային հարցում Մյասնիկյանը Խորհրդային Հայաստանի ամենալավ հրապարակախոսներից էր։ Նրա քննադատության սուրը շարունակ հետ էր մղում արտասահմանյան վարձկան հակահեղափոխականների՝ նոր ոտքի կանգնող բանվորա-գյուղացիական Հայաստանի վրա գործվող հարձակումները»[10]։

Բոլշևիկյան հրապարակախոսության գեղեցիկ նմուշներ են հատկապես «Հին և նոր Հայաստանը» և «Երկու տարուց հետո» հոդվածները։ Քայքայված տնտեսության վերականգնման, ժողովրդի բարեկեցության ապահովման, ստեղծագործ աշխատանքի կազմակերպման կոնկրետ, գործնական խնդիրների առաջադրումն ու քննարկումը այստեղ զուգակցված է վառ ու ոգեշունչ խոսքին։ Վարակիչ է Մյասնիկյանի գրիչը, կերծ հռետորական կեղծ զարդարանքներից, հատու է նրա խոսքը և ազդեցիկ։

Ալ. Մյասնիկյանի հրապարակախոսության ամենահատկանշական կողմերից մեկը գործնականությունն էր. իր հոդվածներում ու ելույթներում նա արծարծում էր սոցիալիստական շինարարության, պարտիայի քաղաքականության կենսագործման հետ կապված կոնկրետ հարցեր։ Ըստ որում, նա միշտ հաշվի էր առնում աշխատավոր զանգվածների տրամադրությունը, հոգեբանությունը, ելնում էր աշխատանքի այս կամ այն բնագավառում ստեղծված կա-

9 Ալ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, էջ 473—474։
10 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, № 67։

ցության համակողմանի մարքսիստական ըմբռնումից։ Ամփոփելով ձեռք բերված նվաճումները, նա միշտ ընդգծում, առանձնացնում էր իրենց լուծմանն սպասող հերթական խնդիրները։ Այստեղից էլ՝ նրա խոսքի հրատապությունը, ազդեցության լայն շառավիղը։ Մյասնիկյան-հրապարակախոսի, Մյասնիկյան-հռետորի այս հատկանշական գիծը լավ է նկատել և բնութագրել Դերենիկ Դեմիրճյանը։ Վերհիշելով Մյասնիկյանի ելույթներից մեկը, նա «Հերոսական սիմֆոնիա» հոդվածում գրել է. «Խոսում էր։ Շատ քիչ եմ պատահել այդպիսի խոսողների։ Նա չէր խոսում, կերտում էր։ Պարզ էր տրամաբանում՝ անշտապ կշռելով, մեկ մեկ վերդիր անելով։ Խոսում էր հանգիստ, արդարամիտ, օբյեկտիվ եղանակով։ Եվ համոզում էր։ Ի՞նչ էր գաղտնիքը։ Մարտունու բոլոր գաղտնիքները պարզ էին.— ա՛յն, որ զգում էիր, որ այս մարդը թե մի բան ասաց, կանի է՛լ։ Միաժամանակ զգում էիր, որ նրա խոսքի հետև դեռ շատ մեծ բովանդակություն կա։ Գիտեիր, որ այդ մարդը խոսելու համար չի խոսում, այլ մտքեր է փոխանակում բանելով, գործելու ժամին։ Եվ նրա խոսքը թարմ էր, որովհետև գալիս էր գործի փորձից, որովհետև գործի խոսք էր։ Ահա ինչու նա համոզիչ էր և հուսադրող»[11]։

Պատահական չէ, որ Մյասնիկյանի շատ հոդվածներ նվիրված են այս կամ այն կոնկրետ հարցին, առաջադրում են ժողովրդատնտեսական հրատապ նշանակություն ունեցող, պարտիական կազմակերպությունների աշխատանքի բարելավման հետ կապված կարևոր խնդիրներ և այլն («Բամբակի համար», «Երևքամյա սոցիալիստական Հայաստանի առօրյա խնդիրները», «Պատասխանատվության մասին», «Կուսակցության մաքրումը», «Շաբաթօրյակների կազմակերպումը», «Ի՞նչ պետք է լինի Հայկոոպը» և այլն)։

Ալ. Մյասնիկյանը վճռականորեն հանդես էր գալիս ֆրազամոլության, ճոճռան խոսքերի դեմ, քննադատում էր այն մարդկանց, ովքեր տառապում էին «ծրագրացավ»-ով, ցուցամոլությամբ։ «Ֆրազան մի կողմ,— գրում էր նա,— տվեք հիմքը, գործը, որ առանց սոսկ ցուցանակի կանի կրկնապատիկ, եռապատիկ ավելի, քան սոսն խոսքը, հաճախ անըմբռնելի, փքուն, առանց բովանդակության...»։ «Մարքսիզմի բնագավառում ունեցած հիմնավոր գիտությունն ու ծանոթությունը, որ լրացվում էր ամեն օր,— բնութագրել է Ալ. Մյասնիկյանին ՌԿ(բ)Պ Անդրերկրկոմը,— կոմունիստական լայն աշխարհայացքը, որ միանգամայն բացասում էր նեղմտությունն ու աղանդավորությունը, հերթական խնդիրների վրա կենտրոնանալու ընդունակ հուժկու կամքը Մյասնիկյանին դարձնում էին բանվորա-գյուղացիական մասսաների իսկական ղեկավարը»[12]։

Ֆրազամոլության դեմ իր պայքարով և գործնականության պահանջով Ալ. Մյասնիկյանն ըստ էության մերժում-ժխտում էր թալմուդիզմը՝ հանուն մարքսիզմ-լենինիզմի ստեղծագործական կիրառման։ «Հայաստանի աշխատավորության առաջապահ գունդը իր ձեռքում ունի այնպիսի մի անգնահատելի զենք, որպիսին մարքսիզմն է»,— ընդգծում էր նա և շարունակում. «Իսկ մարքսիզմի հիմնական սկզբունքը ասում է, որ չկա մեկընդմիշտ տրված, ձևված ու չափված ֆորմա, դրություն, որ իբր՝ մարքսիզմի հիմունքները պետք է իմանալ կիրառել յուրաքանչյուր շրջապատում, տվյալ պայմաններում և յու-

11 «Նոր ակոս», Երևան, 1925, № 5—6—7, էջ 16—17։
12 «Խորհրդային Հայաստան», 1925, № 66։

բաքանչյուր ժամանակ։ Եվ սխալվում է այն գործիչը, որ իրան համարելով մարքսիստ, տեղի անտեղի հոլովում է մարքսիզմի լեկսիկոնից վերցրած բառեր՝ անկախ տեղից ու ժամանակից»[13]։

Այսպիսի պահանջ Ալ. Մյասնիկյանը առաջադրում էր նաև մամուլի աշխատողներին։

Բացառիկ նշանակություն տալով մամուլին՝ աշխատավորների մարքս-լենինյան դաստիարակության և սոցիալիստական շինարարության կոնկրետ խնդիրների լուծման գործում, Ալ. Մյասնիկյանը զգալի ջանք ու եռանդ էր հատկացնում թերթերի աշխատանքի բարելավմանը, գաղափարական մակարդակի բարձրացմանն ու գործնական դերի ուժեղացմանը։ Ինչպես նշել է սովետահայ նշանավոր հրապարակախոս Ա. Մռավյանը՝ «Ալնկ. Մյասնիկյանը մեծ հետաքրքրությամբ հետևում էր մեր մամուլին և Խորհրդային Հայաստանում եղած ժամանակ խոշոր մասնակցություն ուներ նրա աշխատանքներին։ Ռ. Արովը, որը 1921—1922 թթ. աշխատում էր «Խորհրդային Հայաստան» թերթում, վերհիշում էր, թե ինչպես, պետական մեծ ու լարված գործերով ծանրաբեռնված լինելով հանդերձ՝ Մյասնիկյանը «համարյա ամեն օր հնարավորություն ու ժամանակ էր գտնում անցնելու «Խորհրդային Հայաստան»-ի խմբագրատուն», «հարցեր էր տալիս թերթի ու խմբագրության դրության մասին, ցուցումներ էր անում թերթի այս կամ այն պակասության առթիվ», «մամուլը անձամբ ղեկավարելու համար ժամանակ չէր խնայում»[14]։

Աշխատավորների կուլտուրական-լուսավորական դաստիարակության, նոր հասարակարգի կառուցման գործում կարևոր նշանակություն տալով գրականությանն ու արվեստին, կուլտուրական շինարարության ասպարեզում պարտության վարած քաղաքականության անշեղ կենսագործմանը, Ալ. Մյասնիկյանը այստեղ ևս խոշոր դեր էր հատկացնում մամուլին։ Նա գտնում էր, որ մամուլը չի կարող անուշադրության մատնել նոր գեղարվեստի ստեղծման խնդիրները, քանի որ կուլտուրայի ասպարեզը բուրժուական և պրոլետարական գաղափարախոսությունների բախման ամենահիմնական ոլորտներից մեկն է։ Այս ըմբռնման կոնկրետ արտահայտությունն էին մասնավորապես Մյասնիկյանի այն ելույթները մամուլում, որոնք ուղղված էին «արվեստը արվեստի համար» տեսության և բուրժուական գրաքննադատության դեմ[15]։ Նա վճռականորեն հանդես էր գալիս ի պաշտպանություն մարքս-լենինյան մեթոդոլոգիայի՝ պատռելով «էսթետիկական ռեակցիայի դիմակը»։

Նոր, սոցիալիստական գեղարվեստ ստեղծելու, նրա զարգացման համար ուղիներ հարթելու ակտիվ շահագրգռությամբ էր տոգորված Ալ. Մյասնիկյանի՝ «Պրոլետարական գրականության նվիրված «Մուրճ» ամսագրի № 1-ի առթիվ» հոդվածը[16], որն զգալի դեր խաղաց իր առաջին քայլերն անող սովետահայ գրականության կազմավորման պրոցեսում։

Նշելով սովետահայ գրականության մեջ տեղ գտած սխալները, Ալ. Մյասնիկյանը իր գործնական աշխատանքում և ելույթներում, անձնական-մտերմական փոխհարաբերությունների ընթացքում միաժամանակ ընդգծում էր

13 «Խորհրդային Հայաստան», 1922, № 81։

14 «Նոր ակոս», 1925, № 5—6—7։

15 «Գրական քննադատության մեթոդի մասին» («Նոր աշխարհ», Թիֆլիս, 1922, № 1), Ցու. Այխենվալդի «Բաբաստեղծները և բանաստեղծուհիները» («Նոր աշխարհ», 1922, № 2)։

16 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1922, № 267, 268։

գրականը, առանձնապես բարձր գնահատելով նոր գեղարվեստի տաղանդավոր կերտողների աշխատանքը։ Նա զգայուն, հոգատար վերաբերմունք էր դրսևորում հայ մտավորականության այն խոշոր ներկայացուցիչների հանդեպ, որոնք հասարակական-քաղաքական նոր պայմաններում շարունակում էին ազնվորեն ու նոր եռանդով ծառայել իրենց ժողովրդին։ Գրական խնդիրներին, նոր կուլտուրայի ստեղծման գործին ցուցաբերած նրա մոտեցման մեջ միասնաբար էին հանդես գալիս ականավոր պետական գործիչն ու նշանավոր գրականագետը[17]։ Լեոն, վերհիշելով իր և Հովհ. Թումանյանի հանդիպումներն ու զրույցները Մյասնիկյանի հետ, գրել է. «Գերազանցորեն պետական մարդ և գերազանցորեն գրական մարդ։ Ինձ ու Հովհաննես Թումանյանին հափշտակում էր հենց այն հանգամանքը, որ երկրորդ մարդն այնքան սերտորեն ներդաշնակված է առաջին մարդու հետ։ Ալեքսանդր Մյասնիկյանը խոսում էր գրականության մասին ոչ թե իբրև գրականությունից մի կողմ կանգնած մի համակրող, մի մեկենաս։ Ո՛չ։ Նա ինքն բրալ մշակ էր։ Ահա ինչն էր ամենից շատ թանկը մեզ համար»[18]։ Նշելով Մյասնիկյանի ցուցաբերած բացառիկ հետաքրքրությունը գեղարվեստի նկատմամբ, Մ. Սարյանը վկայում է. «Նա, ինչքան ես ինքս մոտիկից դիտեմ, մեծ ուշադրությամբ հետևում էր այն բոլորին, ինչ կատարվում էր գրականության ու նկարչության ասպարեզում։ Ընկ. Մյասնիկյանը կուլտուրապես խոշոր մարդ էր, հազվագյուտ մեծ դեմք»[19]։

Ալ. Մյասնիկյանի խոշոր էրուդիցիան, անընդմեջ հետաքրքրությունը գրականության և արվեստի, առհասարակ կուլտուրայի նկատմամբ, հայ հրապարակախոսությանն ու գրականությանը մատուցած նրա ծառայությունները բանկ էին գնահատում նաև սովետահայ պետական-պարտիական այն գործիչները, որոնք աշխատել էին նրա հետ, նրա ղեկավարությամբ։ «Ընկ. Մյասնիկյանը,— գրել է Ա. Մռավյանը.— չափազանց լայն հետաքրքրություն ունեցող անձնավորություն էր. նա ոչ միայն փայլուն կերպով տիրապետում

---

17 Այս հոդվածի խնդիրների մեջ չի մտնում Ալ. Մյասնիկյանի գրական-քննադատական ժառանգության քննությունը, որը առանձին ուսումնասիրության նյութ է։ Նշենք միայն, որ իր հասարակական-հրապարակախոսական առաջին իսկ քայլերից սկսած՝ նա զբաղվել է նաև գրական քննադատությամբ։ 1906 թ. Նոր-Նախիջևանի «Նոր կյանք» շաբաթաթերթում լույս տեսան Մյասնիկյանի մի քանի փոքրիկ գրախոսությունները հայ դրամատիկական խմբի՝ ռուսաց լեզվով իրագործված ներկայացումների վերաբերյալ (Հ. Հաուպտմանի «Էլգա», Ա. Չեխովի «Ճայ», Ֆ. Ֆալկովսկու «Строители жизни» պիեսների բեմադրությունները)։

Ուշագրավ էր նրա կարդացած գասախոսությունը Մ. Նալբանդյանի մասին Մոսկվայի հայոց ժողովարանում 1910 թ. նոյեմբերի 23-ին։ Ի դեպ, այդ դասախոսության վերաբերյալ տպարարած տաղորդման մեջ «Մշակ»-ի թղթակիցը քննադատում էր Մյասնիկյանին այն բանի համար, որ նրա «դասախոսության ընթացքում կարմիր թելի նման անցնում էր մարքսիստական գիծը» (տե՛ս «Մշակ», 1910 թ., № 275)։ 1919 թ. Մոսկվայում Մյասնիկյանը առանձին գրքույկով հրատարակեց Մ. Նալբանդյանին նվիրված իր ուսումնասիրությունը։ Հետագայում նա գրեց «Միք. Նալբանդյանն ու հայ ինտելիգենցիան» հոդվածը («Գայթար», Օրեաս, 1923 թ., № 12—13)։

Մի շարք կողմերով ուշագրավ են նաև Ալ. Մարտունու «Հովհ. Հովհաննիսյանի և Ալ. Ծատուրյանի բանաստեղծությունների հասարակական արժեքը» («Բարուն», Մոսկվա, 1912 թ., գիրք երրորդ), «Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը» («Նորք», Երևան, 1923 թ., գիրք երրորդ) հետազոտությունները։

Ինչպես նա ահոկտեմբերյան, այնպես էլ սովետական շրջանում Ալ. Մյասնիկյանը հոդվածներ է գրել նաև գրական-կուլտուրական մի քանի այլ խնդիրների վերաբերյալ։

18 «Նոր ա[illegible]ոս», 1925, № 5—6—7։

19 «Խորհրդային Հայաստան», 1925, № 69։

էր մարքսիզմին, տնտեսագիտության, մարքսիստական փիլիսոփայության, այլև մեծ հետաքրքրություն ուներ կուլտուրայի խնդիրների նկատմամբ։ Գրական-գեղարվեստական խնդիրները մեծ չափով նրան զբաղեցնում էին, նրա ուշադրությունը գրավում»[20]։ Ալ. Մյասնիկյանի հիշատակին նվիրված Երևանի քաղսովետի սգո նիստում Աշ. Հովհաննիսյանը բնութագրելով նրա անցած ռևոլյուցիոն ուղին, առանձնապես ընդգծում էր. «Մեր օրերին՝ ընկ. Մյասնիկյանը, Ալ. Մարտունին, դարձավ խոշորագույն հայ հրապարակախոսը և ամենաազդեցիկ հայ մարքսիստ գրականագետը»[21]։

Առանձնակի ուշադրության է արժանի Անդրկովկասի մամուլի կազմակերպման ու ղեկավարման գործում Ալ. Մյասնիկյանի մատուցած խոշոր ծառայությունը այն տարիներին, երբ նա գլխավորում էր ՌԿ(բ)Պ Անդրերկրկոմի աշխատանքները։

Դեռևս ՌԿ(բ)Պ Անդրկովկասյան կազմակերպությունների առաջին համագումարում (1922 թ. փետրվար) Ալ. Մյասնիկյանը ամենայն սրությամբ դնում էր պարտիական և սովետական մամուլի հետագա բարելավման ու կատարելագործման, տպագիր օրգանների աշխատանքի վերակառուցման, նոր թերթերի ու ամսագրերի ստեղծման հարցերը՝ Անդրկովկասում սոցիալիստական շինարարության և աշխատավորների գաղափարական-կուլտուրական դաստիարակության նոր խնդիրներին համապատասխան[22]։ Համագումարին տված «Պարտիական շինարարության մասին» զեկուցման մեջ, նշելով մամուլի նկատմամբ պարտիական ղեկավարության ուժեղացման անհրաժեշտությունը, Մյասնիկյանն ընդգծում էր. «Հարցի այս կողմի վրա պետք է լրջագույն ուշադրություն դարձնել։ Այս տեսակետից 1919 թ. VIII պարտիական համագումարի որոշումները մնում են անխախտ, բայց մենք ասում ենք միայն, թե ինչպե՛ս պետք է աշխատել տվյալ մոմենտին»։ Մամուլի աշխատողների կարևորագույն խնդիրներից մեկը նա համարում էր ամենօրյա սերտ կապի ստեղծումը բանվորա-գյուղացիական լայն զանգվածների հետ։ «Յուրաքանչյուր թերթ,— ասում էր նա,— պետք է լուսաբանի այն, ինչ որ տվյալ մոմենտին ամենից ավելի հետաքրքրում է մասսային»։ Այնուհետև, գավառային թերթերի և ստորին մամուլի հարցերին անդրադառնալուց հետո, Մյասնիկյանը իր զեկուցման մեջ հատուկ ուշադրություն է դարձնում ռեսպուբլիկական կենտրոններում և անդրկովկասյան ընդհանուր կենտրոնում պարտիական-սովետական մամուլի կազմակերպման գործնական խնդիրներին։ Նա գտնում էր, որ անդրկովկասյան ռեսպուբլիկաների կենտրոններում անհրաժեշտ է ունենալ ընդհանուրքաղաքական, պարտիական-սովետական բնույթի թերթեր և պարտիական երկշաբաթյա ժուռնա։, ինչպես նաև «Սովետների տեղեկագիր»։ Անդրկովկասյան կենտրոնի համար նա ցանկալի էր համարում ունենալ երկու թերթ (պարտիական ու սովետական) և հասարակական-տնտեսական բնույթի ամսագիր։

Ալ. Մյասնիկյանի այս առաջարկներն ու նկատառումները դրվեցին Անդրկովկասի մամուլի կազմակերպման հիմքում՝ Անդրֆեդերացիայի ստեղծումից հետո։ ՌԿ(բ)Պ Անդրկովկասի Երկրային կոմիտեն, Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ, պարբերաբար անդրադառնում էր թերթերի և ամսագրերի աշ-

20 «Խորհրդային Հայաստան», 1925, № 69։
21 Նույն տեղում, № 67։
22 Տե՛ս Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 409—410։

խատանքին, ժամանակին բացահայտում թույլ տված սխալներն ու վրիպումները, մշակում կոնկրետ միջոցառումներ դրանց վերացման համար, մշտապես զբաղվում էր ժուռնալիստների նոր կադրեր պատրաստելու, նրանց գաղափարական-պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացման խնդիրներով։ Առանձնապես զգոն պետք էր լինել նոր տնտեսական քաղաքականության պայմաններում, երբ աշխուժություն էր ցուցաբերում բուրժուական գաղափարախոսությունը՝ ցանալով ներթափանցել նաև մամուլի էջերը։ Այդպիսի փորձերի դեմ էր ուղղված ՌԿ(բ)Պ Անդրկովկասյան երկրային կոմիտեի՝ Ալ. Մյասնիկյանի նախաձեռնությամբ ընդունված որոշումը[2]։ Խստագույնս քննադատելով և դատապարտելով մամուլի առանձին օրգաններում տեղ գտած սովետական ժուռնալիստիկայի ոգուն անհարիր մի քանի դրսևորումները, Անդրերկրկոմը վճռականորեն դնում էր թերթերի խմբագրությունների պատասխանատվության բարձրացման խնդիրը։ Որոշումը պարտավորեցնում էր պարտիական օրգաններին ուժեղացնել վերահսկողությունն ու ղեկավարությունը մամուլի նկատմամբ, «ներշնչել բոլոր լրագրական աշխատավորներին, թե մամուլը պետք է բարձր լինի անձնական հաշիվներից», քանզի «մեր մամուլի հիմնական կոչումն է՝ մարքսիստական տեսակետից լուսաբանելու բանվորական շարժման ընդհանուր ու ընթացիկ հարցերը, տալու ճշգրիտ տեղեկություններ, ինֆորմացիա և առողջ, բացարձակ ու խրատական քննադատություն ամբողջ ճակատում, բնավ չշեղվելով ու չընդունելով անձնական, էժան ու դեմագոգիական տոն»։

Ալ. Մյասնիկյանի հետ աշխատած ընկերները հետագայում վերհիշում էին, թե ինչպիսի շահագրգռված մտահոգություն էր հանդես բերում նա սոցիալիստական շինարարության մեջ մամուլի դերը է՛լ ավելի բարձրացնելու, թերթերի ներգործության ուժն ու ազդեցության ոլորտը ընդլայնելու, գրավոր խոսքը առավել նպատակասլաց դարձնելու նկատմամբ։ Նա աչալուրջ հետևում էր, որ աշխատանքի այս կամ այն բնագավառում տեղ գտած թերությունների, սխալների ու վրիպումների բացահայտումը մամուլի կողմից անուշադրության չմատնվի, հասնի իր նպատակին. ոչ ոք իրավունք չունի անտեսելու, արհամարհելու թերթերի քննադատական ելույթները. «Մեր մամուլը շրջապատված պիտի լինի կուսակցական, խորհրդային, տնտեսական և այլ կազմակերպությունների ուշադրությամբ և հոգածությամբ և դեպի մամուլը ցույց տրված անուշադիր վերաբերմունքը, իսկ առավել ևս՝ մամուլի հալածանքները և հետապնդումները պիտի դադարեցվեն ամենավճռական կերպով»։ Սկզբունքային նշանակություն ունեցող այս պահանջը պարտիական փաստաթղթի ուժ ստացավ Անդրերկրկոմի՝ Ալ. Մյասնիկյանի կազմած և ստորագրած հատուկ շրջաբերականում[24], որ ուղարկվեց անդրկովկասյան ռեսպուբլիկաների պարտիական կենտրոնական, շրջանային ու մայրաքաղաքային կոմիտեներին և պարտիական-սովետական թերթերի խմբագրություններին։

Անդրկովկասի պարտիական-սովետական մամուլի պատմության մեջ Ալ. Մյասնիկյանի կատարած բացառիկ դերի, այդ ասպարեզում կատարած եռանդուն և ոգեշունչ աշխատանքի մասին են պատմում նրա հիշատակին նվիրված այն հոդվածներն ու հիշողությունները, որ լույս տեսան 1925 թ. մարտի վեր-

23 Տե՛ս «Заря Востока», 1923, № 75 և «Խորհրդային Հայաստան», 1923, № 73։
24 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1923, № 102։

ջերին «Զարյա Վոստոկա» թերթում։ Տալով այդ նյութերի տեսություններ[25], «Խորհրդային Հայաստան»-ը նշում էր, թե դրանց մեջ առանձնապես շեշտված է, որ Ալ. Մյասնիկյանը «անդրկովկասյան մամուլի կազմակերպման գործում խոշոր դեր էր խաղում և փաստորեն նրա ղեկավարն էր հանդիսանում»։ Նա հատուկ ուշադրություն էր դարձնում բան-թղթակցական շարժման կազմակերպմանը, տեղերում կատարվող աշխատանքի լայն ու ճշմարտացի արտացոլմանը. «Թիֆլիսի բանթղթակիցները հիանալի կերպով հիշում են նրա ելույթներն ու զեկուցումները բանթղթակիցների անելիքների մասին». Մյասնիկյանի նախաձեռնությամբ են կազմակերպվել «Զարյա Վոստոկա» թերթի «Խորհրդային Անդրկովկաս» և «Մեր գյուղը» բաժինները. նա խիստ կարևոր էր համարում այն բոլոր խնդիրների լուսաբանությունը, որոնք ծագում են տեղերում»։

Ալ. Մյասնիկյանը խմբագրում էր ՌԿ(բ)Պ Անդրկովկասյան երկրային կոմիտեի օրգաններ «Զարյա Վոստոկա», «Մարտակոչ» թերթերը։ Իր ողբերգական մահից երկու օր առաջ՝ 1925 թ. մարտի 20-ին նա, որպես խմբագիր, ստորագրում է «Կավկազսկի բոլշևիկ» ամսագրի առաջին համարը։ Խորհրդանշական է նաև, որ Ալ. Մյասնիկյանի ստորագրած վերջին պարտիական փաստաթուղթը նույնպես վերաբերում էր մամուլին. դա Անդրերկրկոմի 1925 թ. մարտի 21-ի շրջաբերականն էր, ուղղված անդրկովկասյան ռեսպուբլիկաների կենտկոմներին, գավկոմներին և շրջկոմներին՝ «Անդրկովկասյան մամուլի ցուցահանդես» կազմակերպելու մասին[26]։ Հաջորդ օրը նա զոհ գնաց ինքնաթիռային աղետին։

Ալ. Մյասնիկյանը խոշոր ծառայություն մատուցեց սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի և նոր հասարակարգի կառուցման գործին նաև որպես մամուլի կազմակերպիչ ու ղեկավար, իբրև աչքի ընկնող հրապարակախոս։ Նրա եռանդուն, բեղմնավոր գործունեությունը այս ասպարեզում նշանակալից մի էջ է մեր հայրենիքի կոմունիստական մամուլի պատմության մեջ։

СТРАНИЦЫ ИЗ ПУБЛИЦИСТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АЛ. МЯСНИКЯНА

(К 80-летию со дня рождения)

А. Г. ФЕЛЕКЯН

(Резюме)

В статье освещается публицистическая деятельность выдающегося деятеля Коммунистической партии и Советского государства Александра Федоровича Мясникяна в 1917—1925 гг. Значительное место уделяется его работе по организации и руководству коммунистической печатью в Белоруссии, Москве и Закавказье.

25 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, № 70։

26 Տե՛ս Ա. Ն. Մնացականյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1955, էջ 357։